ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 25
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

SCHOOL N 25 GYUMRI
SHIRAK REGION
ARMENIA
GOVERNMENTAL
NON-PROFIT
ORGANIZATION

377502, ք.Գյումրի, Պուշկինի 101 ☎ (0312) 5-51-01, 5-68-24 E-mail school25@mail.ru 377502, GYUMRI, Pooshkin 101

«26» սեպտեմբերի 2025թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ) հայտարարում է մրցույթ ֆիզկուլտուրա (շաբաթական 21 դասաժամ),ուսուցչի թափուր տեղի մրցույթի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակած հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը պետք է ներկայացնի՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, և բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Դիմումներն (փաստաթղթեր) ընդունվում են ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Պուշկինի 101) 2025 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Պուշկինի 101:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 0312 5 51 01 հեռախոսահամարով;